600.0018.29.01.04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2004 թվականի № 18Ա
ք. Երևան

## «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17- րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13 -ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» № 1Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել «ՀայՌուսգազարդ փակ» բաժնետիրական ընկերության ընկերության համար բնական գազի բաշխման գործունեության սակագին՝ 6,271 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 7,526 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, բաշխված յուրաքանչյուր հազար նորմալ խորանարդ մետրի համար:
2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի նոյեմբերի 29-ի Բնական գազի սակագների մասին» № 34 որոշման նախաբանը, 1 -ին կետի 1.3 ենթակետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի մարտի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
29 հունվարի 2004թ.